

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺԻՆ

ԱՌԻԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№ 2014-03

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՅԻԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ 2013 Թ.
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԵՐԵՎԱՆ, 28.02.2014 Թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1) Ներքին աուդիտի իրականացման իրավական հիմքերը

- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք:
- «Գնումների մասին» ՀՀ օրենք:
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
- ՀՀ կառավարության 11.08.2011 թ. «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման», «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի № 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» № 1233-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 10.02.2011 թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» № 168-Ն որոշում:
- ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011 թ. «ՀՀ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» № 974-Ն հրաման:
- ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012 թ. «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 143-Ն հրաման:
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագիր (հաստատված ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի բաժնի պետի կողմից 28.12.2013 թ., վավերացված ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի կողմից 28.12.2013 թ.):
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 31.01.2014 թ. № 11-Ա/1 հրաման:

2) Աուդիտի տեսակը

3) Աուդիտի իրականացման ընթացքում կիրառված մեթոդները

- **Կատարողականի աուդիտ:**
- Աուդիտորական խումբը ուսումնասիրությունների համար ընտրել է աուդիտի ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները, մասնավորապես՝ առկայության և համապատասխանության փաստաթղթային և փաստացի ընտրանքային ուսումնասիրություն իրականացնելու միջոցով, արժանահավատության սկզբունքին (ձևի նկատմամբ բովանդակության գերակայություն, էականություն,

- | | | | |
|-----------------------------------|-----------------------|---|--------------------|
| | հաշվենկատություն | և | ամբողջականություն) |
| | համապատասխանությունը: | | |
| 4) Աուդիտի ենթարկված միավորը | - | «Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն: | |
| 5) Հասցեն և այլ տեղեկություններ | - | ք. Երևան, Տերյան 69
ՀՎՀՀ 03503438 | |
| 6) Աուդիտի ժամանակաշրջանը | - | 01.01.2013 թ. մինչև 31.12.2013 թ. | |
| 7) Ֆինանսական պատասխանատու անձինք | - | «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն՝ Հովհաննես Սոֆոյան, գլխավոր հաշվապահ՝ Սերգեյ Սիմոնյան | |
| 8) Աուդիտի տևողությունը | - | 2014 թ. փետրվարի 4-13-ը | |
| 9) Աուդիտ իրականացնողներ՝ | - | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի բաժին | |
| - աուդիտորներ՝ | | Ս. Աբրահամյան՝ ներքին աուդիտի բաժնի պետ,
Ռ. Օհանյան՝ ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար | |
| - ներգրավված անձ՝ | | Ա. Կարապետյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության մարզական համալիր միջոցառումների ծրագրերի վերլուծության և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ | |

II. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Իրականացված ներքին աուդիտի նպատակն է՝

1. Գնահատել «Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՀԸՖ) կողմից «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն (N° 1 հավելված, N° 08-01-01 աղյուսակ, տող՝ «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում») ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ 08.01.2013 թ. կնքված N° 6 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում ստացված միջոցների հաշվին պայմանագրային պարտավորությունների (ՀՀ առաջնությունների անցկացման, հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, համաշխարհային օլիմպիադաների և ունիվերսիադաների, երիտասարդական և պատանեկան օլիմպիական օրերի և այլ միջազգային մարզական միջոցառումների կազմակերպում, անցկացում և մասնակցություն (այսուհետ՝ ծրագիր)) և 29.08.2013 թ. կնքված N° 189 նվիրաբերության պայմանագրի

(այսուհետ՝ նվիրաբերության պայմանագիր) կատարման համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և պայմանագրերի պահանջներին:

2. Ուսումնասիրել ՀՀԸՖ-ի հիմնադիր փաստաթղթերը և նրա գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթեր:

3. Գնահատել ՀՀԸՖ-ի կողմից ծրագրի շրջանակներում օգտագործվող և (կամ) տրամադրվող ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվության արժանահավատությունն ու ճշտությունը:

4. Բացահայտել ՀՀԸՖ-ի կողմից կատարված ծրագրի հաշվապահական (ֆինանսական) գրանցումների մեջ տեղ գտած անհամապատասխանությունները:

5. Գնահատել ՀՀԸՖ-ի կողմից ծրագրի շրջանակներում իրականացվող գործառույթների, այդ գործառույթները կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանությունը:

6. Ծրագրի համար ՀՀԸՖ-ի ստացված միջոցների և կատարված ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության գնահատումը, առկա անհամապատասխանությունների բացահայտումը:

7. Գնահատել ՀՀԸՖ-ի կողմից կատարված ծրագրի ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման, գույքի օգտագործման պահանջներին համապատասխանությանը:

8. Գնահատել ՀՀԸՖ-ի կողմից իրականացվող ծրագրի գործառույթների ներքին հսկողության գործընթացների արդյունավետությունը:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀԸՖ-ն ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, Հայաստանի ընթշամարտի ձևերը զարգացնելու և հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

2. ՀՀԸՖ-ն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ:

3. ՀՀԸՖ-ն կարող է իր անունից ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

4. ՀՀԸՖ-ն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար ունի օրենքով սահմանված իրավունքներ:

5. ՀՀԸՖ-ն կարող է լուծարվել ժողովի կամ դատարանի որոշմամբ:

6. ՀՀԸՖ-ի կառավարումն իրականացվում է ՀՀԸՖ-ի բարձրագույն մարմնի՝ ժողովի, ՀՀԸՖ-ի նախագահի և գործադիր տնօրենի կողմից:

7. ՀՀԸՖ-ի կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են՝

ա) նպաստել Հայաստանում ընթշամարտի մասսայականացմանը, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը.

բ) միավորել ֆեդերացիայի թիմերի ընթշամարտով պարապողներին և մասնագետներին.

գ) պատրաստել և կատարելագործել բարձր կարգի մարզիկներ.

դ) աջակցել մարզիկների, մարզիչների, մրցավարների, վետերանների և մյուս մասնագետների սոցիալական իրավունքների պաշտպանությանը.

ե) իր իրավասությունների շրջանակներում մշակել ընթացիկ և հեռանկարային ծրագրեր՝ ուղղված Հայաստանում ըմբռնարտի ձևերի զարգացմանը.

զ) մշակել և հաստատել իր կողմից կազմակերպվող միջոցառումների կանոններ և կանոնադրություններ.

է) կազմակերպել և անցկացնել տեղական և միջազգային մրցումներ և առաջնություններ արտասահմանյան երկրների, սփյուռքի հայկական թիմերի ու մարզիկների մասնակցությամբ:

IV. ՀԻՄՆԱԴԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀԸՖ-ն ստեղծվել է 2002 թվականի հուլիսի 29-ի ՀՀԸՖ-ի համաժողովի որոշմամբ:

ՀՀԸՖ-ն գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի կողմից 2002 թ. սեպտեմբերի 3-ին (գրանցման համարը՝ 211.171.01208, վկայականի համարը՝ 03Ա 055932):

ՀՀԸՖ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀԸՖ-ի կանոնադրության համաձայն:

ՀՀԸՖ-ի կանոնադրության 7.13 մասի համաձայն ժողովի կողմից 2 տարի ժամկետով ընտրվում է վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչ), որի պարտավորություններից է նաև ժողովին ՀՀԸՖ-ի գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման հաշվետվություն ներկայացնելը:

ՀՀԸՖ-ի 05.02.2011 թ. ներկայացուցչական համաժողովի նիստում (արձանագրություն 5 առ 05.02.2011 թ. վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունները դրվել են ՀՀԸՖ-ի նախագահության վրա:

ԴԻՏԱՐԿՈՒՄ՝

ՀՀԸՖ-ի կանոնադրության 7.13 մասի համաձայն ՀՀԸՖ-ի նախագահության անդամները և նախագահը չեն կարող լինել վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

Համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-ի հոդվածի՝ «Եթե կազմակերպության կանոնադրությունը նախատեսում է վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ձևավորում, ապա կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները բարձրագույն մարմնի հաստատման են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության հետ մեկտեղ:

ՀՀԸՖ-ի 2013 թ. տարեկան գործունեության և վերը նշված 7.17 մասով նախատեսված՝ ստուգման վերաբերյալ հաշվետվություններ կամ եզրակացություններ չեն կազմվել, ինչը նվազեցրել է ՀՀԸՖ-ի ներքին վերահսկողության համակարգի հուսալիությունը:

V. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՄՈՒՏՔԵՐ

1. Պայմանագիրը կնքվել է 2013 թվականի հունվարի 8-ին: Այն ստորագրել են՝ Նախարարության անունից՝ աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյանը և ՀՀԸՖ-ի կողմից՝ նախագահ Ս. Կարապետյանի անունից՝ Ն. Մակարյանը:

Պայմանագրի շրջանակներում Նախարարությունը պարտավորվել է ծրագրի իրականացման համար, սահմանված ժամանակացույցի համաձայն, ՀՀԸՖ-ին հատկացնել 220,000.0 հազար դրամ գումար:

2013 թ. պայմանագրի շրջանակներում ՀՀԸՖ-ին փաստացի հատկացվել է 220,000.0 հազար դրամ:

2. ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Պայմանագրի շրջանակներում ՀՀԸՖ-ն պարտավորվել է ապահովել ՀՀ առաջնությունների անցկացման, հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, միջազգային մրցաշարերի, համաշխարհային օլիմպիադաների և ունիվերսիադաների, երիտասարդական և պատանեկան օլիմպիական օրերի և այլ միջազգային մարզական միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և մասնակցությունը:

1.1 Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն ՀՀԸՖ-ն պարտավորվել է միջոցառման օրացուցային պլանի փոփոխության դեպքում այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ և այդ միջոցառման ծախսերի նախահաշիվը Պատվիրատուին ներկայացնել մինչև նախորդող ամսվա 20-ը:

1.2 Պայմանագրի 2.1.4 կետի համաձայն ՀՀԸՖ-ն պարտավորվել է ներկայացնել ըստ միջոցառումների կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ, այդ թվում՝ մարզական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն (պայմանագրի 2.1.8 կետ):

ԴԻՏԱՐԿՈՒՄ 1՝

Համաձայն ՀՀԸՖ-ի ներկայացրած միջոցառումների օրացուցային պլանի՝ 2013 թ. ընթացքում ՀՀԸՖ-ի կողմից նախատեսվել է մասնակցել (կազմակերպել) ազատ ոճի և հունահռոմեական ըմբշամարտի մեծահասակների, երիտասարդների և պատանիների թվով 72՝ աշխարհի, Եվրոպայի, ՀՀ առաջնությունների, Եվրոպայի գավաթի խաղարկության, միջազգային մրցաշարերի և միջազգային ու հանրապետական ուսումնամարզական հավաքների, այդ թվում՝

- 1) աշխարհի 6 առաջնություն.
- 2) Եվրոպայի 6 առաջնություն.
- 3) Եվրոպայի գավաթի 1 խաղարկություն.
- 4) ՀՀ 6 առաջնություն.
- 5) միջազգային 21 մրցաշար.
- 6) միջազգային և հանրապետական 32 ուսումնամարզական հավաք:

2013 թվականի ընթացքում Նախարարության կողմից հատկացված միջոցների հաշվին (220,000.0 հազար դրամ) ՀՀԸՖ-ն փաստացի կազմակերպել և (կամ) մասնակցել է ազատ ոճի և հունահռոմեական ըմբշամարտի մեծահասակների, երիտասարդների և պատանիների թվով 60՝ աշխարհի, Եվրոպայի, ՀՀ առաջնությունների, Եվրոպայի գավաթի խաղարկության, միջազգային մրցաշարերի և միջազգային ու հանրապետական ուսումնամարզական հավաքների, այդ թվում՝

- 1) աշխարհի 6 առաջնություն,
- 2) Եվրոպայի 6 առաջնություն,

- 3) Եվրոպայի գավաթի 1 խաղարկություն,
- 4) ՀՀ 6 առաջնություն,
- 5) միջազգային 12 մրցաշար (պլանավորվածից 9-ով պակաս),
- 6) միջազգային և հանրապետական 29 ուսումնամարզական հավաք (պլանավորվածից

3-ով պակաս):

Մանրամասները տես՝ ներգրավված անձ Ա. Կարապետյանի հաշվետվության մեջ):

Այդ նպատակներով ՀՀԸՖ-ի կողմից կատարված փաստացի ծախսերը կազմել են 220,005.0 հազար դրամ:

ԴԻՏԱՐԿՈՒՄ 2՝

1) ՀՀԸՖ-ի կողմից ներկայացված 2013 թ. օգոստոս ամսվա փաստացի ծախսերի հաշվետվության համաձայն ազատ ոճի ըմբշամարտի ՀՀ հավաքականը ՌԴ, ք. Ադլերում մասնակցել է (22.08-02.09) ուսումնամարզական հավաքի, որի համար ծախսվել է 5,992.1 հազար դրամ գումար:

Աուդիտի արդյունքում պարզվել է, որ ՀՀԸՖ-ն իրականում չի մասնակցել ք. Ադլերի ուսումնամարզական հավաքին:

Համաձայն ՀՀԸՖ-ի ֆինանսական պատասխանատու Ն. Մակարյանի բացատրության՝ ք. Ադլերի ուսումնամարզական հավաքի փոխարեն նույն ժամանակաշրջանում ազատ ոճի ըմբշամարտի հավաքականը մասնակցել է ՌԴ ք. Կիսլավոդսկում կազմակերպված ուսումնամարզական հավաքին (10.08-24.08) և այդ նպատակով կատարված փաստացի ծախսը կազմել է 5, 515.9 հազար դրամ:

2) Գրանցվել են դեպքեր, երբ ՀՀԸՖ-ն չի կազմակերպել և (կամ) չի մասնակցել նախապես պլանավորված միջազգային և (կամ) հանրապետական նշանակության ուսումնամարզական հավաքի կամ միջազգային մրցաշարի (դրանք թվով 12-ն են):

Այս դեպքում ՀՀԸՖ-ն չի կատարել պայմանագրի 2.1.3 կետով ստանձնած պարտավորությունը և Նախարարության հետ նախապես չի համաձայնացրել միջոցառման օրացուցային պլանի փոփոխությունը:

ԴԻՏԱՐԿՈՒՄ 3՝

1) ՀՀԸՖ-ն պայմանագրով սահմանված ժամկետներում՝ ամսական հաճախականությամբ, ներկայացրել է հաշվետվությունները, ինչպես բյուջետային ծախսերի համար սահմանված հաշվետվության ձևաչափով, այնպես էլ աղյուսակներով՝ ըստ միջոցառումների կատարած ծախսերի: Վերջիններում ներկայացված են տվյալ միջոցառման հետ կապված մանրամասներ (միջոցառման տեսակը, անցկացման վայրը և ժամկետները, ըստ հոդվածների պլանավորված և փաստացի ծախսերը, տարբերությունը):

2) Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ 2013 թ. ընթացքում ՀՀԸՖ-ն կազմակերպել է ազատ ոճի և հունա-հռոմեական ըմբշամարտի, մեծահասակների և երիտասարդների 60 միջոցառումներ և մասնակցել դրանց:

Աուդիտի արդյունքում պարզվել է, որ բյուջետային ծախսերի համար սահմանված հաշվետվության ձևաչափով ներկայացվող գումարային ցուցանիշները, որպես կանոն, լրացվում են սխալներով, այն է՝ միևնույն հաշվետվության տարբեր տողերում և սյունակներում թվերը գրանցված են՝ չպահպանելով դրանց գրանցման համարժեքությունը (արտացոլված թվերը և՛ դրամներով են, և՛ հազար դրամներով, այն դեպքում, երբ ձևաչափը պահանջում է թվերը